

13455



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան



«04» 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 263 - 24

Նախաձեռնող՝

«ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ
ք. Երևան, Բաբաջանյան 19շ., բն. 23

Գործունեությունը՝

Թալին բնակավայրի Մյասնիկյան փողոց 17,
թիվ 2 հիմնական դպրոցի փարածքում նոր
միջնակարգ դպրոցի կառուցում
Արագածուրնի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 263 - 24

«04» դեկտեմբեր 2024թ.

Արագածոտնի մարզի Թալին համայնքի Թալին բնակավայրի Մյասնիկյան փողոց 17, թիվ 2 հիմնական դպրոցի տարածքում նոր միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Թալին բնակավայր

Ներածական մաս. «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Թալին բնակավայրում կառուցել միջնակարգ դպրոց:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (<Օ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում:

Նկարագրական մաս. Միջնակարգ դպրոցի կառուցման համար նախատեսված տարածքը գտնվում է Արագածոտնի մարզի Թալին համայնքի Թալին բնակավայրի Մյասնիկյան փողոց 17 հասցեում: Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է Արագած լեռան հարավարևմտյան հրաբխային սարավանդի լանջերի վրա, ծովի մակարդակից բարձրությունը կազմում է 1637 մետր: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1607.0-1610.0 մետրի սահմաններում:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն



հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Հողատարածքը ծանրաբեռնված է հին դպրոցի շենքով և օժանդակ շինություններով, որոնք նախատեսվում է ապամոնտաժել:

Նոր կառուցվող դպրոցը նախատեսվում է կառուցել հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ: Նախատեսվում է ունենալ բացօթյա մարզադաշտ, վազքուղի, իսկ ընդհանուր տարածքը՝ բարեկարգել և կանաչապատել: Համաձայն էսքիզային նախագծի՝ դպրոցը կլինի երկհարկանի, կունենա նաև որպես թաքստոց ծառայող նկուղային հարկ, որի ընդհանուր մակերեսը կկազմի 572 մ²: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ ներքին բակ՝ դասարաններին լուսավորություն ապահովելու և լրացուցիչ հանգստի գոտի ստեղծելու համար: Առաջին հարկի մակերեսը կլինի մոտ 3200 մ²: Հարկում տեղակայված կլինեն առաջինից մինչև 5-րդ դասարանների լսարանները, նախադպրոցական դասարանը, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն՝ իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճը՝ իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգուց հաշմանդամների համար: Մուտքային գոտուն կից տեղակայված կլինեն հաշմանդամների համար նախատեսված վերելակը, ծնողների սպասարահը, ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոն: Երկրորդ հարկի մակերեսը կլինի մոտ 2560 մ²: Հարկում տեղակայված կլինեն 6-ից մինչև 12-րդ դասարանների լսարանները, 2 լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված լսարանն իր լաբորատորիայով և կից սենյակով, ֆիզիկայի մասնագիտացված լսարանն՝ իրեն կից լաբորատորիայով, ռազմագիտության կաբինետը, հանդիսությունների դահլիճն՝ իրեն սպասարկող սենյակների խմբով, 4 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Դպրոցը կունենա 35 մ x 91.5 մ առանցքային չափեր և սեյսմիկ կարով բաժանված կլինի 2 հավասար մասնաշենքերի: Միջանցքների առանցքային չափը կլինի 3.5 մ՝ որոշ տեղամասերի լայնացումներով: Դասասենյակները կունենան 7 մ x 7 մ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կկազմի 48 մ²: Առաջին հարկի բարձրությունը հատակից հատակ կկազմի 3.3 մ: Երկրորդ հարկի բարձրությունը ստորին մասում կլինի 3.0 մ: Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կկազմի 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ՝ 4.5 մ:

Տանիքի հարավ նայող լանջին նախատեսվում է տեղադրել արևային մարտկոցներ, նախատեսվում է դպրոցը համալրել կաթսայատնով, իսկ շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Դպրոցում նախատեսված է ընդհանուր օդափոխության մեխանիկական դրդմամբ համակարգեր:

Ջերմամատակարարումը կլինի սեփական կաթսայատնից, որը կտեղադրվի դպրոցի տարածքում՝ 432 հոգանոց դպրոցի սպասարկման համար: Շինությունը կլինի հարկանի, կունենա 6 մx9 մ առանցքային չափեր:



ՖՎ վահանակները տեղակայվելու են տանիքին՝ տանիքի ուղղությանը զուգահեռ, 19° հորիզոնական թեքությամբ, այլուհինե կրող հենակառուցվածքի վրա:

Ջրամատակարարումն ու ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Նախատեսվող կոյուղագիծը կմիանա տարածքում նոր կառուցվող կոյուղու մաքրման Топас 100 սարքավորմանը: Մաքրման սարքավորման միջոցով մաքրված ջուրը կկուտակվի ռեզերվուարի մեջ, որից կիրականացվի տարածքի ոռոգումը: Ավելցուկային ջրի հեռացման համար կնախատեսվի դրենաժային հորատանցք:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի մակերես՝ 2.0519 հա /100%/,
- կառուցապատման մակերես՝ 2872.7 քմ /14 %/,
- կանաչապատման մակերես՝ 14117.1 քմ /68.8 %/,
- բարեկարգման մակերես (ճանապարհներ, ճեմուղիներ, հարթակներ)՝ 3529.2 քմ /17.2%/:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 3047 տ, որից հետլիցքը՝ 2122 տ, ավելացած հողային զանգվածը կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ թխկի սրատերև կարմիր՝ 20 հատ, գնդաձև իլենի՝ 22 հատ, սյունաձև թույա՝ 8 հատ, բարդի արծաթափայլ՝ 33 հատ, բարբարիս՝ 10 հատ, ասպիրակ՝ 9 հատ, ֆորգիցիա՝ 38 հատ, խենոմելես՝ 12 հատ, լաբոռնում անագիրատերև՝ 13 հատ, եղևնի կովկասյան՝ 19 հատ, գիհի կազակական՝ 16 հատ, հուդայածառ՝ 10 հատ, ձիակասկ՝ 7 հատ, սամշիտ՝ 89 գմ, ծաղկանոց՝ 78 մ², սիզամարգ՝ 7140 մ²: Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա կլինեն կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ՝ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, փորման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.



- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար, պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- կառաջանա շենքերի քանդումից շինարարական աղբ, որը կօգտագործվի կապալառուի կողմից՝ որպես երկրորդային հումք,
- վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը,
- կառաջանա կենցաղային չտեսակավորված աղբ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ, որը կտեղափոխվի ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
2. փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
4. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ 15 օրյա հաճախականությամբ:



Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. ՀՀ դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, Թալինի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադքի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
4. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
6. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:



ԵՂՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Թալին համայնքի Թալին բնակավայրի Մյասնիկյան փողոց 17, թիվ 2 հինական դպրոցի տարածքում նոր միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

A handwritten signature in blue ink, likely belonging to the Deputy Head of the Center.

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

A handwritten signature in blue ink, likely belonging to the First Deputy of the Center.

Սվետլանա Կիզիրյան